


ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

У Н И В Е Р С И Т Е Т
МЕСРОП МАШТОЦ



MESROP MASHTOTS
U N I V E R S I T Y

ԼՐԱՏՈՒ
ВЕСТНИК. BULLETIN



2011 1(10)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1918 - 1920 ԹԹ.**

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ
պատմ. գիտ. դոկտոր

1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որի անդրանիկ կառավարության լիազորություններն ստանձնած Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակեց հայկական գավառների գերագույն կառավարիչ և իր առաջնակարգ խնդիրներից մեկը համարեց պետական կառույցների ստեղծումը: Այդ գործընթացը բարդ էր, հակասական և ոչ միանշանակ, ինչը պայմանավորված էր տարածաշրջանում գործող աշխարհաքաղաքական ուժերի որոշակի փոխդասավորությամբ և նրանց միջև մղվող պայքարի ուժգնությամբ:

Հնարավոր չէ պատկերացնել մի պետություն, որը գուրկ լինի ազգային պետական անվտանգության համակարգից և նրա բաղկացուցիչ մաս կազմող հետախուզական ու հակահետախուզական ծառայություններից: Հայաստանի առաջին հանրապետության հետախուզության կարկառուն դեմքերից մեկը՝ Տիգրան Դևոյանցը, գրել է. «Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է: Հետախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատրաստի պատերազմի համար եւ անդադար կուսումնասիրէ թշնամիի ուժերու դասաւորութիւնը, զօրաշարժի յատակագիծը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները, հաղորդակցութեանց միջոցները, կապը, մթերքներն ու ռազմամթերքի պահեստները, բերքը, ժողովրդի տնտեսական եւ առողջապահական վիճակը, անոր տրամադրութիւնը, ազգութիւններու փոխյարաբերութիւնը եւ անոնց վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի գործամասերը, հրամանատարներու բնաւորութիւնը, գետերու խորութիւնը տարւայ չորս եղանակներուն, անցնելիք տեղերը, նոր շինուող ճանապարհները, օդակայանները եւ այլն... Մի խօսքով՝ հմուտ հետախուզող իր գործելակերպի եւ գործունէութեան մէջ որեւէ սահման չունի, նա պէտք է շարժի պահանջի եւ պայմաններու համեմատ»:^[1] Հենց այդ նկատառումներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1918թ. երկրորդ կեսին ձեռնամուխ եղավ պետական-ազգային անվտանգության համակարգի մարմինների ձևավորմանը՝ այդ գործի կազմակերպման համար որոշակի գումարներ հատկացնելով իր չափազանց աղքատիկ բյուջեից: Եվ այսպես՝ 1918թ. օգոստոսի 13-ին Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհուրդը, քննարկելով զինվորական նախարարության միջնորդությունը ավիացիայի, հետախուզության, ռադիոհեռագրի վրա կատարված ծախսերի ծածկման համար միջոցներ տրամադրելու վերաբերյալ, որոշեց հավանություն տալ ձեռնարկված միջոցառումներին, ինչպես նաև կառավարության հատուկ վարկի հաշվին հատկացնել 6 միլիոն ռուբլի, այդ թվում՝ 20 հազար ռուբլի չնախատեսված ծախսերի համար, 20 հազար ռուբլի հետախուզության համար, ևս 20 հազար ռուբլի՝ հակահետախուզության համար: ^[2] Այնպես է, որ հետախուզությանը հատկացվող գումարները չափազանց փոքր էին. անգամ հարևան Վրաստանն իր հետախուզության կարիքների համար

հատկացրեց անհամեմատ ավելի մեծ գումարներ: Դժվարությամբ լցնելով պետական գանձարանը՝ ՀՀ կառավարությունը նույնքան դժվարությամբ էլ հատկացումներ էր կատարում հետախուզական և հակահետախուզական ծառայությանը: Հետագայում, ելնելով հանրապետության ֆինանսական հնարավորություններից, կառավարությունն սկսեց ավելի մեծ հատկացումներ կատարել: Այսպես՝ Նախարարների խորհրդի 1919թ. սեպտեմբերի 1-ի նիստում որոշվեց հետախուզության և հակահետախուզության գործի կազմակերպման ու ընթացիկ գործունեության ծավալման համար հատկացնել 535 հազար ռուբլի: [3] Նախարարների խորհրդի 1920թ. մայիսի 8-ի նիստում (նիստ 254ա), որը վարեց Հ.Օհանջյանը, լավեց զինվորական նախարարի զեկուցումը հետախուզության և հակահետախուզության բաժանմունքին մայիս ամսվա ծախսերի համար 657 հազար ռուբլի հատկացնելու մասին, և որոշում ընդունվեց նշված գումարը հատկացնել 40 միլիոնանոց հատուկ ֆոնդից: [4]

Հետախուզական և հակահետախուզական մարմիններն ստեղծվեցին ու կազմակերպական գործընթաց անցան ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի կազմում: Գլխավոր շտաբն իր ստեղծման պահից ուներ հետևյալ բաժինները՝ ընդհանուր (պետ՝ կապիտան Մ.Ի. Դվեռնիցկի), օպերատիվ (պետ՝ փոխգնդապետ Վ. Պրիտոմանով), հետախուզական (պետ՝ փոխգնդապետ Ա.Կ.Շենուր, Սարդարապատի հերոսամարտի ժամանակ եղել է հայկական զորքերի Սարդարապատի գործախմբի շտաբի պետ և 1967թ. Ֆրեզնոյում հրատարակել է բարձրարժեք հուշեր այդ օրերի մասին [5]), 1919թ. սեպտեմբերից մինչև 1920թ. ապրիլ՝ կապիտան Վ.Գ.Մուրադյան (անկուսակցական), 1920թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան Տ.Դևոյանց (ՀՅԴ անդամ, իր իսկ վկայությամբ Դրոյի դասընկերն էր), 1920թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը (դեկտեմբերի 2-ը)՝ պորուչիկ Մ.Ն.Դոդոխյան): Հետախուզական բաժանմունքը կազմակերպվեց հատուկ գաղտնի պլանի համաձայն: Ըստ այդ պլանի՝ այն, բացի պետից և նրա երկու օգնականներից, որոնցից մեկը ղեկավարելու էր հակահետախուզությունը, պետք է ունենար մեկ ավագ և մեկ կրտսեր գրագիրներ, որոնք պետք է վարեին հետախուզական գրագրությունը: [6]

Հետախուզական բաժնի համակարգում աշխատեցին նաև պողպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև՝ հետախուզության մշտական գործակալ Վրաստանում, հայ մեծ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի որդին), ենթասպա Արշակ Սարգսյանը (մշտական գործակալ Բաքվում), Գրիգորի Երամովը (դիտորդ Վրաստանում), պողպորուչիկ Սիմոն Հովսեփյանը (գրասենյակի և Ղամառլուում հետախուզության վարիչ) և ուրիշներ: Հակահետախուզության գործունեությունը ղեկավարում էր Նորին Մեծության Ռուսիական ռազմաճակատի գորակալանին կից Մեծոլյան նավատորմի գլխավոր հրամանատարի շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժնի նախկին պետ, ծովակալության գծով պորուչիկ Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը՝ Հովհան Խան-Կոտուրսկին, որը, գալով հայրենիք, նվիրվեց երկրի անվտանգության համակարգի ստեղծման գործին, [7] ինչի վկայությունն է զինվորական նախարարի պարտականությունները կատարող զեներալ-մայոր Ա.Դուլխանովի /Արսենի Դուլխանյան/ ստորագրությամբ օգոստոսի 7-ի հ. 14 հրամանագիրը, որի հիման վրա Խան-Կոտուրսկին օգոս-

տոսի 5-ին ընդգրկվեց Գլխավոր շտաբի սպայակազմում: [8] Ռազմական գերատեսչության գծով, 1919թ. ապրիլի 14-ի հրամանագրի համաձայն, հետախուզական բաժանմունքի անմիջական խնդիրներից էին հակառակորդի և տեղանքի վերաբերյալ տեղեկության հավաքումը, մշակումը և ժամանակին գորքերին հաղորդումը, բրիգադների, շտաբների կողմից կատարվող հետախուզական աշխատանքի ղեկավարումը, լրտեսության դեմ պայքարի կազմակերպումը, հետախուզության համար հատկացվող գումարների հաշվառումը:

Այդ համակարգն սկսեց աշխատել և դարձավ հետախուզության գործի կազմակերպման կարևոր օղակ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս մասնավորապես՝ Վրաստանում, ինչ-որ չափով՝ Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, անգամ Թուրքիայում և այլուր:

Այսպես՝ հետախուզության սպաները և աշխատակիցները որոշակի մասնակցություն ունեցան Հայաստանի մի շարք շրջաններում մահմեդական տարրերի, թուրք ու ադրբեջանական գործակալների դեմ մղված պայքարում: Այս առումով պետք է կարևորել, օրինակ, գնդապետ Մ.Մ.Չինկկիչի և այլոց դերը վրաց-հայկական 1918թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմում, փոխգնդապետ Ա.Կ.Շենուրի ակտիվ մասնակցությունը 1919թ. սկզբին Նոր Բայազետի գավառի մահմեդականների խռովության ճնշման ուղղությամբ ձեռնարկված «Չող-Բասարգեշարյան» հրաշալի օպերացիային, որը նաև հայկական բանակի և հետախուզության համագործակցության լավագույն էջերից է, ինչպես նաև պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկու գործունեությունը Շարուր-Նախիջևանում, Լազիստանում և այլուր:

Հայկական հետախուզական ծառայությունը բացահայտեց Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության քողի տակ գործող հատուկ ծառայությունների մեքենայությունները:

Այդ մասին շատ բազմանշանակ վկայում է Տ.Դևոյանցը. «Երեւանում գտնուող Ատերբեյջանի դիվանագիտական միսիան ոչ միայն անսովոր արագութեամբ յայտնում էր Թիֆլիս եւ Բազու Հայաստանի զօրքերի դասատրութեան եւ զօրքերի ու ռազմամքերքի փոխադրութեանց մասին, այլեւ» իր ձեռքի տակ ունեցած էր Հայաստանի գաղտնի հրամանագրերն ու հրահանգները:

Հայաստանը իր Խորհրդարանի մէջ տեղ էր տուել ե՛լ մահմեդականներին, որոնց պատգամաւորների ընտրութեան համար Ատրբեյջանի կառավարութիւնը բաց էր թողել 40000 թուրքի: Նրանց բազմաթիւ լրտեսները ամէն օր անարգել կերպով Երեւանի թաթարական թաղի տետի կողմից անցնում էին Թոխմախեսան Գեօլը եւ նրա մտտից գնում Շարուր-Նախիջեւան, Բէյուկ Վէդի, Չանգիբասար՝ Երեւանից փոխադրելով այնտեղ ռազմամքերք, հրահանգներ, լուրեր, ուտեստեղէն... Եթէ Ատերբեյջանի դիվանագիտական ներկայացուցիչը չէզոք գօտիի վրայ չթալանուէր «աւազակների» կողմից, Թիֆլիսի վրայով Բազուից ուղարկուած գումարով միայն Շարուր-Նախիջեւանի շրջանի թաթարական բանակի թիւը պէտք է հասներ 10000-ի. նոյն համեմատութեամբ պէտք է աւելանար կոռուղ թաթարների թիւը Բէյուկ-Վիդիի, Չանգիբասարի եւ այլ շրջանների մէջ, եւ ամբողջ Հայաստանի հայութիւնը պիտի գտնուէր բնաջնջման սպառնալիքի տակ»: [9]

Միանգամայն օրինաչափ է, որ այդ տարիներին հայկական հատուկ ծառայությունների՝ հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի աշխատակիցները վերահսկեցին նաև Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը և գաղտնագրեցին նրա կողմից Բաքու ուղարկված մի շարք ծածկագրված հեռագրեր, ինչը հնարավորություն տվեց բացահայտելու թշնամական գործունեության որոշ կարևոր կողմեր, որի մասին փաստերի և վկայականների կարելի է հանդիպել ժամանակակիցների թողած հուշերում, մասնավորապես Տ.Դևոյանցի, Ռուբենի և այլ գործերում: Այսպես՝ հետախուզությունը բացահայտեց, որ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Միր Բաբաևի կողմից Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին 1919թ. սեպտեմբերի 18-ին (N 736) և սեպտեմբերի 21-ին (N 757) ուղարկված հեռագրերում կան հետաքրքրական մանրամասներ: Օրինակ՝ առաջին հեռագրում Միր Բաբաևը արտաքին գործերի նախարարին տեղեկացնում էր, թե Բաբաևի հայկական գործակալը (Արշակ Մարգիսյան - ՀՀ հետախուզության ռեզիդենտ տներկայացուցիչը Բաբաևում) հայկական հակահետախուզության պետին հաղորդել է, որ հատուկ հանձնարարությունների գծով սպա կապիտան Քասումբեկովը և կոռնետ Ալի խան Մակինսկին Ադրբեջանի հակահետախուզությունում հաշվառման մեջ են: Միր Բաբաևը հաղորդում էր նաև, որ հայկական հատուկ ծառայությունները բացահայտել են իրենց գործունեությունը Երևանում և իր երկրի արտաքին գործերի նախարարին խնդրում էր իրենց ընդգրկել Ադրբեջանի բանակի կազմում:^[10] Իսկ սեպտեմբերի 21-ի հեռագրի գաղտնագրեծումից ակնհայտ դարձավ, որ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը տեղեկություններ էր հաղորդում այն մասին, որ Հայաստանում ընթանում է 19-ից 30 տարեկանների զորահավաք, որ Երևանի քաղաքապետ Ա.Շահխաթունին մեկնել է Դիլիջան՝ դիրքերն անձամբ ստուգելու համար:^[11] Այսինքն՝ Միր Բաբաևը Երևանում լրտեսությամբ էր զբաղվում, իսկ երիտասարդ հայկական հակահետախուզությունը ուշի ուշով հետևում էր թշնամուն և վնասագրեծում նրա մեքենայություններն ու խարդախ գործարքները:

1920թ. մայիսի կեսերին ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բաժինը^[12] ՀՅԴ Բյուրոյին, ՀՀ արդարադատության, ներքին գործերի և զինվորական նախարարություններին, բանակի սպարապետ գեներալ Թ.Նազարբեկյանին, խորհրդարանի նախագահին, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին, Բաթումում ընդհանուր հյուպատոսին, Հայաստանի պատվիրակությանը Փարիզում, Հայաստանի Հանրապետության դեսպաններին Իտալիայում, Լոնդոնում, Վաշինգտոնում և այլուր հղեց մի հեռագիր-հաղորդագրություն այն մասին, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից հրապարակվել է Երևանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների ու նրանց գործակալների միջև փոխանակված ողջ գաղտնի գրագրությունը: Այն վերաբերում է Հայաստանում Ադրբեջանի կառավարության և նրա ներկայացուցչի կատարած հակապետական, հակահայկական ագրեսիվ գործունեությանը՝ ուղղված Հայաստանի շրջաններում հակապետական հոսանքների և ելույթների կազմակերպմանը, Չանգիբասարում ապստամբական դրոշմային սրմանը, ՀՀ իշխա-

նությունների տապալմանը և ՀՀ տարածքի օրինական ու անբաժանելի մասը կազմող Չանգիբասարի, Կարսի և Արդահանի մարզերի, Նախիջևանի և այլ տարածքների անօրինական բռնակցմանը Ադրբեջանին: ^[13] 1920թ. հունիսի 3-ին ՀՀ զինվորական դատարանում լավեց Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության նախկին աշխատակիցների դատը: Նրանք մեղադրվում էին տարբեր քրեական-քաղաքական հանցանքների, մասնավորապես՝ Չանգիբասարյան խռովարարներին աջակցության և այնտեղ անկարգությունների հրահրման մեջ. ի դեպ, այդ ամենը կատարվել էր Երևանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Թեմուր Բեկ Մակինսկու անմիջական հանձնարարությամբ:

Հենց կայացման բարդ և ոչ միանշանակ գործընթացներ ապրող, սովի և քայքայման գործոնների դժվարին պայմաններում ծնվող և համատրոբեն կայանալ ձգտող հայկական հետախուզական ծառայության ջանքերով է որոշակիորեն, գործնականում հաջողվել կանխել Ադրբեջանի Հանրապետության ագրեսիան Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերում^[14] (ընկած հիմնախնդիրը հայ պատմագիտության բոլորովին, բացարձակապես չուսումնասիրված հարցերից է), ինչի շնորհիվ նաև հայկական զինուժը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ կարևոր և վճռորոշ հաղթանակ տարավ և դրանով իսկ ապահովագրեց ՀՀ տարածքային անձեռնմխելիությունը Հայաստանի ռազմավարական տեսանկյունից այդ կարևոր տարածքային սահմանահատվածում. այսպես, ինչպես պարզ է դառնում հայտնի հայ հետախույզ Տ.Դևոյանցի^[15] հուշագրությունից, որը հալած յուրի տեղ չենք ընդունում, սակայն անտեսել էլ չենք կարող, քանզի այն բացահայտորեն վկայում է հայկական հետախուզության օգտաշատ գործունեության մի չափազանց կարևոր փաստի՝ պատմադրվագի մասին, որն, ըստ էության, ուղղակիորեն և գործնական առումով որոշակիորեն նպաստել է Գ.Նժդեհի գլխավորությամբ խիզախող Հայոց զինուժին ջարդել և վտարել Ադրբեջանի ագրեսոր բանակին Չանգեգուրից, ինչպես դա ժամանակին արել է անկուտրում հայրենասեր զինուժը Դավիթ Բեկի գլխավորությամբ: Այս կապակցությամբ Տ.Դևոյանցը շատ հստակ պնդում է. «Հայաստանի հետախուզական բաժանմունքը 200,000 բուրյով կաշառեց Նժդեհի դեմ գտնուող Ազրբեյջանի բանակի սպայակոյտի պետին, որը դասաւորեց իր զօրքերը, թնդանօթները եւ գնդացիները մեր ուզած ձեւով եւ, երբ կոխը սկսուեց, Նժդեհի ուժերը ջախջախեցին Ազրբեյջանեան շատ աւելի ուժեղ բանակը, գրաւեցին կամ ոչնչացրին թշնամու ուժեղ հրետանին եւ գնդացիները:

Ազրբեյջանի այդ շրջանի զօրքերի սպայակոյտի պետը ազգութեամբ վրացի էր: Դրանից յետոյ էր, որ Գարեգին Նժդեհը դարձաւ սպարապետ...»:^[16]

Որպեսզի տպավորություն չառաջանա, որ մենք մի կողմից՝ պահանջում ենք բննադատական վերաբերմունք հուշագրական գրականության նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ ինքներս ենք վկայակոչում միայն հենց այդ բնույթի աղբյուրները, վերոնշյալ վկայությունները հաստատելու համար դիմենք նաև արխիվային փաստերի օգնությանը: Արխիվային մի շարք կարևոր փաստաթղթեր օգնում են լույս սփռելու ակնհայտորեն անբավարար կամ ավելի ճիշտ բոլորովին չուսումնասիրված հիմնախնդիրների վրա՝ դրանով իսկ հաղթա-

հարելով մի շարք քարացած կաղապարամտքեր, կաղապարացված եզրահանգումներ ու դատողություններ: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդի, ասել է թե՛ հետախուզության գծով գործերի կոորդինատորի և ղեկավարի՝ գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիչմիշյանի հետ կապված առաջին իսկ փաստաթղթերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հենց վերը ներկայացված հարցադրումների տեսանկյունից՝ չնայած իրենց մեջ պարունակված տեղեկատվության որոշ հակասականությանը: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ չնայած հայկական հետախուզությունը դեռևս բավականաչափ երիտասարդ էր, անփորձ, ընդամենը էլ առաջին քայլերն էր անում լուրջ ծառայություն դառնալու ճանապարհին, սակայն դա բարոյաքաղաքական առումով խոչընդոտ չհանդիսացավ նրա կողմից հայթայթվող տեղեկատվության օգտակարության գործակցի տեսանկյունից: Ստորև բերվող փաստաթուղթը դրա լավագույն ապացույցներից մեկն է, ինչը հաստատում է Տ.Դևոյանցի վերոնշյալ պնդումը հայ հետախույզների արգասաբեր գործունեության մի, հիրավի, շատ հետաքրքիր պատմաճշի մասին՝ փաստելով նաև այն մասին, որ նրա գործունեությունն ամենևին էլ այնքան դժգույն չի եղել, ինչպես այդ մասին «փորձում են վկայել» որոշ ականատես և ժամանակակից հեղինակներ: Այսպես՝ Թիֆլիսում Հայաստանի հատուկ ծառայության ղեկավարը՝ Հ.Քիչմիշյանը, 1920թ. հունվարի 17-ի իր զեկուցագրում (N 33)՝ ուղղված ՀՀ զինվորական նախարարին, տեղեկացնում էր, որ լիովին վստահության արժանի անձը՝ Բոգդան Դավիդովիչ Ավան-Յուզբաշի Խան Սազնախսկին (որին Թիֆլիսում Հայաստանի զինվորական ներկայացուցչության շրջանում համարում էին իրենց հավատարիմ մարդ) իր կողմից ղեկավարվող վարչության հանձնարարությամբ, համաձայնության գալով Չանգեզուրում գործելու «իրավունք» ստացած ադրբեջանական զորքերի ջոկատի շտաբի պետ փոխգնդապետ իշխան Էրիստովի հետ, վերջինից խոստում է ստացել 200-300 հազար ռուբլու դիմաց իրենց տրամադրել ադրբեջանական բանակի շիֆրը (ծածկագիրը, գաղտնագիրը), ողջ գաղտնի գրագրությունը, ադրբեջանական զորքերի դիսլոկացիան (տեղաբաշխումը) և Չանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը՝ պարտավորվելով նաև մարտական հրամանը կազմել իրենց համար ցանկալի իմաստով և մշակել օպերացիայի ողջ պլանը՝ համաձայն հայկական կողմի ցուցումների, միաժամանակ պահպանելով մշտական կապ, տեղյակ պահելով Ադրբեջանի բոլոր ռազմական գործողությունների մասին: Ինչպես տեսնում ենք, շատ հետաքրքիր տեղեկատվություն է, որն, անշուշտ, միանշանակ չի կարելի ընդունել, չի կարելի անտեսել նաև ադրբեջանական հետախուզության նմանատիպ մտադրությունները և նախապատրաստվող ձեռնարկումները, չնայած գեներալ Քիչմիշյանը վստահորեն ավելացնում էր տեղեկատվության մեջ, որ Խան Սազնախսկին վստահեցրել էր իրենց հարորդած տեղեկությունների հավաստիության մեջ՝ ավելացնելով, որ այն տեղ կհասցվի փոխգնդապետ Էրիստովի միջոցով՝ ընդ որում դրանք վճարելով միայն վերոհիշյալ փաստաթղթերի ստուգումից հետո: Ըստ երևույթին, գրեթե լիովին համոզվածություն արտահայտելով այն հանգամանքում, որ ադրբեջանական այս սպաներին արդեն լիովին կարելի է կաշառված կամ իրենց կողմը գրաված համարել, գեներալ Քիչմիշյանը այս խիստ հետաքրքիր զեկուցագրում նաև նշում էր, որ

իր կարծիքով անհրաժեշտ է անհապաղ Թիֆլիս գործուղել կապիտան Վ.Գ. Մուրադյանին. վերջինս իր հետ պետք է անհրաժեշտ չափով դրամ, որպեսզի անմիջական հարաբերության մեջ մտնի հիշյալ փոխգնդապետ Էրիստովի հետ բոլոր հանգամանքների մանրագնին պարզաբանման համար: Քիչմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանի գործուղման նախօրյակին անհրաժեշտ է հարցում անել զորքերի շտաբի պետին այն խնդիրների մասին, որոնք անհրաժեշտ է տեղյակ պահել փոխգնդապետ Էրիստովին՝ 1) զորքերի թվաքանակի, 2) դրանց խմբավորումների, 3) ռազմական գործողությունների ուղղությունների, 4) օժանդակ օպերացիաների մասին: Այս հետաքրքիր զեկուցագրի վերջամասում գեներալ Քիչմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանը պետք է տեղեկացվի իր աշխատանքի համար անհրաժեշտ մանրամասն և սպառիչ հրահանգով, որի մեջ և կմտնի բոլոր տեղեկությունների ստուգումը: Բացի այդ, Քիչմիշյանը տեղեկացնում էր, որ բանավոր զեկույցի համար այդ նպատակով իր կողմից Երևան է գործուղվել Թիֆլիսի հետախուզական ցանցի լավագույն աշխատակիցներից մեկը՝ պորուչիկ Եղիազարովը: Փաստաթղթի վրա կա նաև համապատասխան գրառում (N 34)՝ զինվորական նախարարի անունով, այն մասին, որ 200-300 հազար ռուբլով կարելի է ձեռք բերել շիֆրը և ադրբեջանական զորքերի տեղաբաշխման ողջ գաղտնի գրագրությունը:^[17] Վերջին հաշվով, այստեղ կարևորն այն է, որ չնայած կարելի է մտածել, որ հայկական հետախուզությունը միասնություն ուներ հավատալու ադրբեջանական բանակի սպաներին նման կարևոր հարցերում, այնուամենայնիվ, հարկ է հատուկ արձանագրել, որ հայ հետախույզները այս պարագայում պարզապես հաջող գործեցին և ձեռք բերեցին կարևորագույն տեղեկատվություն, որ կարող էր ծառայել Հայաստանի անվտանգության և պաշտպանունակության ապահովմանը (նման օրինակների կարելի է հանդիպել նաև այլ երկրների պրակտիկայում): Դիմելով անգամ կաշառքի և կարևոր տեղեկատվություն ձեռք բերելու այլ միջոցների ու եղանակների՝ այն գործնականում ծառայեց նպատակին՝ Էպեստեզուրի Գ.Նժդեհի կողմից գլխավորվող զորամասերի կողմից Ադրբեջանի դեմ տարած վճռորոշ հաղթանակին: Հարկ է կրկին հավաստել վկայակոչելով Տ.Դևոյանցին, որ երբ Ադրբեջանը խոչոր քանակությամբ զորքեր էր կենտրոնացնում Չանգեզուրի դեմ՝ ի դեմ հայկական հետախուզական ծառայության ՀՀ կառավարությունը կարողացավ ձեռք բերել ռազմավարական մեծ արժեք ներկայացնող թանկարժեք տեղեկատվություն, ինչն օգնեց հասնելու ծանրակշիռ արդյունքների հակառակորդի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում: Այդ մասին Տ.Դևոյանցը ուղղակի շեշտում է հետևյալը. «Հայաստանի կառավարութունը կարողացավ կաշառել Ատերբեյջանի զորքերի սպայակոչուտի պետին, որ մի վրացի գնդապետ էր: Վերջինս ոչ միայն տուեց մեզ Ատերբեյջանի զորքերի դասաորոշումը, այլև դասաորեց թաթարական զորամասերը այնպիսի ձևով, որ մեր բանակը շատ հեշտութեամբ ջարդեց նրանց եւ գրաւեց նրանց թնդանօթները, գնդացիները եւ բաւական ռազմամթերք»:^[18] Կարծում ենք՝ լրացուցիչ և հավելյալ բնույթի մեկաբանություններն այստեղ, ըստ էության, ավելորդ են:

Հայկական հետախուզական ծառայության պատմության ուշագրավ էջերից է դեպի էրզրում, Վան և Արեւմտյան Հայաստանի այլ կարևոր քաղաքներ 1919թ. գարնանը կապիտան Տիգրան Դևոյանցի կատարած այցը, նրա

գործունեությունը Կոստանդնուպոլսում:^[19] Հայկական հետախուզական ծառայությունը՝ ի դեմս Տիգրան Դևոյանցի և նրա կազմակերպած խմբի, իր հենակետն ունեցավ Թուրքիայի սրտում՝ Կոստանդնուպոլսում, որտեղից Հայաստան ուղարկվեց կարևոր տեղեկույթ տարբեր քաղաքական փոփոխությունների, քենալական ուժերի ձեռնարկումների և դաշնակիցների վերաբերմունքի ու դիրքորոշման մասին. «Լաւ էր, որ Պոլսից մեկնելուս միջոցին այնտեղ թողնեցի մի կորիզ, որ խոստացաւ պարբերաբար, առանց վարձատրութեան, Հայաստանի սիրոյն համար, ուղարկել ինձ կարելու հետախուզական լուրեր, առընչութիւն ունեցող Հայաստանի հետ: Այդ կորիզը՝ հին, վարձուած հայ հետախոյզներից էր բաղկացած»:^[20]

1919թ. աշուն-1920թ. ձմեռ ժամանակահատվածում Տ.Դևոյանցի կողմից Կ.Պոլսից ուղարկված, ինչպես նաև արդեն նրա բացակայությամբ այնտեղից ստացված հեռագրերի, զեկուցագրերի ու ամփոփագրերի, դրանց նշանակության մասին գրում է նաև Ռ.Հովհաննիսյանն իր հանրահայտ «Հայաստանի Հանրապետություն» քառահատոր գրքաշարում:^[21]

Թեև ՀՀ հատուկ ծառայությունները ներգրավվեցին պետական անվտանգության ապահովման գործում և անգամ հասան որոշակի հաջողությունների, սակայն դրանց կազմակերպվածքի ու գործունեության կատարելագործման ուղղությամբ աշխատանքները չդադարեցվեցին: Մասնավորապես զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկու կողմից Գլխավոր շտաբի պետին 1919թ. մայիսի 2-ին ներկայացված զեկուցագրում, ինչպես նաև զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար փոխգնդապետ Ալեքսանդր Շենուրի 1919թ. մայիսի 21-ի զեկուցագրում՝ ուղղված զինվորական նախարար զեներալ-մայոր Քրիստափոր Գերասիմի Արարատյանին (զինվորական նախարարի պարտականությունները կատարել է 1919 թ. մարտի 27-ից մինչև 1920 թ. ապրիլի 3-ը^[22]), առաջարկվեցին սկզբունքային ռազմաքաղաքական մտտեցումներ՝ հետախուզական գործի կազմակերպման և նրա գործունեության արդյունավետության մեծացման համար արտաքին գործերի նախարարության, նրա ներկայացուցչությունների (այդ թվում՝ դեսպանատներ, հյուպատոսարաններ և այլն) և հետախուզական ծառայությունների միջև սերտ համագործակցություն հաստատելու, արտասահմանում գործող հայ հետախույզներին աջակցելու և օգնելու նկատմամբ:^[23]

Հետագայում՝ 1920թ. ապրիլի 8-ին, ՀՀ Նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման մասին, որոշում կայացրեց այդ գործունեությունը ենթարկել ՀՀ դեսպանների հսկողությանը:^[24]

Հաջորդ քայլը Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության ստեղծումն էր. հարցը լավեց Նախարարների խորհրդի 1919թ. ապրիլի 8-ի նիստում և կայացվեց դրական որոշում: Նախարարների խորհուրդը կարևորեց Թիֆլիսում զինվորական ներկայացուցչության հիմնումը^[25], քանզի այնտեղ արդյունավետ գործունեության ծավալումը կնշանակեր պաշտպանել Հայաստանի Հանրապետության ռազմավարական

շահերը և ամրապնդել երկրի աշխարհաքաղաքական դիրքը տարածաշրջանում: Նախարարների խորհրդի այդ նիստում արձանագրվեց այն փաստը, որ զինվորական գործակալը՝ կցորդը, նշանակվում է զինվորական և արտաքին գործերի նախարարների փոխադարձ համաձայնությամբ, ներգրավվում է դիվանագիտական ներկայացուցչության կազմի մեջ և գործում նրա ղեկավարի ցուցումների համաձայն՝ որպես զինվորական վարձատրվելով ի հաշիվ զինվորական վարկերի: Նախարարների խորհուրդը արտաքին գործերի նախարարին հանձնարարեց կազմել Թիֆլիսի զինվորական գործակալի գրասենյակային, ներկայացուցչական և այլ ծախսերի նախահաշիվ 9 ամսվա համար՝ 1919թ. ապրիլի 1-ից մինչև տարեվերջ հատկացնելով 90 հազար ռուբլի:^[26]

Անվտանգության համակարգի կայացման ճանապարհին կարևոր քայլ էր նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին կից (դեսպանություններ, հյուպատոսություններ և այլն) զինվորական կցորդների հաստատության ստեղծումը. նախահաշիվը և աշխատակարգը 1919թ. հունիս-հուլիս ամիսներին արդեն հաստատված էին:^[27]

Հետագայում կազմակերպական բնույթի որոշակի ջանքեր գործադրվեցին հետախուզական ծառայության և արտաքին գործերի նախարարության զանազան կառույցների միջև փոխաշահավետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

Սակայն արտաքին գործերի նախարարության և հետախուզական ծառայության միջև հարաբերություններն ամենևին էլ հարթ չէին և երբեմն ընթանում էին փոխադարձ պահանջատիրության և անհարկի քաշքշուկի մթնոլորտում: Օրինակ՝ 1919թ. հունիսի 18-ին արտաքին գործերի նախարարին ուղղված գրությամբ (N 3833) Գլխավոր շտաբի պետ Շենուրը խնդրում էր շտապ հաղորդել և առաջիկայում էլ տեղյակ պահել, թե հետախուզական բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկություններից որոնք են ոչ ճիշտ, ինչպես նաև կատարել դիվանագիտական ներկայացուցիչներից ստացված տեղեկույթի փոխանցում:^[28] Իսկ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետին ուղղված 1919թ. հունիսի 19-ի գրության մեջ (N 179) շեշտում էր, որ տվյալ պահին հնարավոր չէ առանձին փաստերով հայտնել, թե հետախուզական բաժնի կողմից ներկայացված որ տեղեկություններն են ոչ ճիշտ եղել, սակայն հետախուզական բաժանմունքի կողմից հունիսի 8-ին ներկայացված ամփոփագրի վերջին տեղեկությունները (Թիֆլիսում կատարվող գորահավաքի և Խորհրդային Ռուսաստանի, Գերմանիայի, Վրաստանի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների մասին), Թիֆլիսից ստացված հաղորդագրությունների համաձայն, չեն համապատասխանում իրականությանը:^[29]

Նշված երկու փաստաթղթերն էլ վկայում են, որ նորաստեղծ հետախուզական և հակահետախուզական ծառայությունների գործունեությունը հանդիպում էր դժվարությունների, երբեմն էլ նրանց կողմից թույլ էին տրվում սխալներ ու բացթողումներ, ինչը պատահում է բոլոր երկրների հատուկ ծառայությունների պրակտիկայում: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ ծառայությունների կայացման գործընթացը բարդ էր, ոչ միանշանակ, իսկ արտագործնախարարության հետ հարաբերությունները հստակ չէին, թեև բոլոր

երկրներում էլ արտաքին քաղաքական գերատեսչությունը մշտապես եղել է արտաքին հետախուզական ծառայության գլխավոր կազմակերպիչն ու ղեկավարը: Հայաստանի Հանրապետության արտգործնախարարության պաշտոնյաները հենու էին մնում հետախուզական ծառայություններից, չէին վստահում, կասկածի էին ենթարկում հետախուզական ծառայությունների գործունեության արդյունքները: Այս ամենը հանգեցնում էր թյուրըմբռնումների և բացասական հետևանքների՝ վնաս հասցնելով Հայաստանի առաջին հանրապետության ազգային-պետական անվտանգությանը:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը, բացի իր ընթացիկ աշխատանքից, նաև ձեռնարկեց հեռանկարային գործունեություն, մասնավորապես որոշակի ջանքեր գործադրեց հետախուզության բնագավառի համար անհրաժեշտ կադրերի պատրաստման ուղղությամբ, կադրեր, որոնք պետք է տիրապետեին ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին:^[30] Այդ ծանր տարիներին նույնիսկ արվեցին ռազմական և հետախուզական կադրերի ուսուցման դասընթացներ կազմակերպելու փորձեր: Այս առումով հատկանշական է ռազմական և այլ կադրերի ուսուցումն ու պատրաստումը Ֆրանսիայում կազմակերպելու նախաձեռնումը: Այդ ուղղությամբ 1920 թ. աշնան սկզբին կատարվեցին կոնկրետ քայլեր, սակայն 1920թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական աղետալի պատերազմը ծախսեց այդ պլանները:

Այն, որ Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայություններն իրենց ընձեռված հնարավորությունների և առկա կադրերի շրջանակներում փորձել են աշխատել առավելագույն արդյունավետությամբ, ակնհայտորեն երևում է մի շարք փաստաթղթերի անկողմնակալ և մանրագնին վերլուծությունից: Մակայն նրանք, հաղթահարելով ահռելի ֆինանսատնտեսական և կադրային դժվարություններ, այդուհանդերձ ի վիճակի չեղան կանխելու ներքին ու արտաքին իրավիճակի սրումը Թուրքիայի, Վրաստանի, Ռուսաստանի և այլ պետությունների շահադիտական քաղաքականության ու գործելակերպի, նրանց հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեության հետևանքով: Ֆինանսատնտեսական դժվարությունները, կադրային սուլը, օպերատիվ աշխատանքի փորձի գրեթե բացակայությունը, կտրվածությունը Հայաստանի նկատմամբ նախկինում աշխարհաքաղաքական հետաքրքրություն ունեցած Ռուսաստանից և նրա ուսումնական ռազմածանոթ կառույցներից, ազգամիջյան հարաբերությունների խեղդուկ միջավայրը և գերազանցապես արևմտամետ տրամադրությունները ի դերն հանեցին անչափ դժվարին պայմաններում հայկական հետախուզության և հակահետախուզության ձեռք բերած հաջողությունները, որոնք կարող էին ավելի ակնառու լինել, եթե համապատասխան կառավարական-ռազմական կառույցների կողմից հարկ եղած հոգատարությունը ցուցաբերվեր պետականորեն խիստ կարևոր այդ բնագավառում կազմակերպական-քաղաքական հիմնախնդիրների լուծման նկատմամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դեյեանց Ս., Հետախույզի մը յուշերը: Փարիզ, «ՎԷՄ», 1938, N 3, էջ 59:
2. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 201, ց. 1, գ. 484, թ. 9, Ֆ.Պ- 202, ց. 1, գ. 13, թ. 12, Ֆ.Պ- 204, ց. 1, գ. 216, թ. 1:
3. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100, թ. 194, գ. 249, թ. 1:
4. Տե՛ս Նույն տեղում, գ. 146, թ. 82, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 107, մաս 2- րդ, թ. 87:
5. Տե՛ս «Սարդարապատի հերոսամարտը, Ալեքսանդր Կ.Շնե՛ուր. Մասնակցողի Յուշեր»: Ֆրեզնո, 1967:
6. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 204, ց. 1, գ. 132, թթ. 54 - 55:
7. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 29^ա, թ. 215, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, թթ. 2 - 20, Տե՛ս նաև «ՎԷՄ», Փարիզ, 1938, Յունվար-մայիս, N 2, էջ 49:
8. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 40, թ. 23:
9. Դեյեանց Ս., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 4 (249), էջ 88:
10. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 73 (71), թ. 155:
11. Տե՛ս Նույն տեղում, թ. 156:
12. Այդ բաժինն ստեղծվել էր 1919 թ. ապրիլի սկզբին արտաքին գործերի նախարարությանը կից՝ որպես Տեղեկատվական բյուրո, որը պետք է ծառայեր ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի խնդիրներին (տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, թ. 24):
13. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 427, մաս 2 -րդ, թթ. 284, 288, 290, գ. 461, թթ. 24 - 27, 28 - 31, 40:
14. 1919թ. վերջին ադրբեջանական 2 զորաբանակ գեներալներ Շիխլինսկու և Մեհմանդարովի հրամանատարությամբ ներխուժեցին Չանգեզուր: Գ.Նժդեհը Գորիսի տակ կազմակերպեց հակազրոհ, ...թշնամին խուճապահար փախուստի դիմեց դեպի Ավդալար /այժմ՝ Լաչին/: Այս պարտությունից հետո ադրբեջանցիները մինչև 1920թ. ապրիլը չհամարձակվեցին հարձակվել Չանգեզուրի վրա. Ադրբեջանը օգտագործեց նաև թուրքական ուժերը, որոնք 1920թ. ապրիլին Նուրի փաշայի գլխավորությամբ փորձեցին գրավել Կասպանը, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին Որոտանի կիրճում: Ապրիլի վերջերին Նժդեհը ոչ միայն ետ մղեց թշնամու բոլոր զրոհները, այլև Դրոյի հետ անցավ Արցախ և օգնություն հասցրեց հերոսական արցախահայությանը. - **Ա. Մելքոնյան**, Հայոց պատմություն. Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, «Հայագիտակ», 1998, էջ 217. Տե՛ս՝ **Է.Լ. Դանիելյան, Ա.Ա. Մելքոնյան**, Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, «Չանգակ-97», 2008, էջ 297- 299.- Հենց այս իրադարձությունների կապակցությամբ և Չանգեզուրում 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերի ընթացքում Գ.Նժդեհի ծավալած հերոսական գործունեության կապակցությամբ վերն արժարժվում է հայ պատմագիտության բացառապես չլուսաբանված և անհայտ էջերից մեկը՝ կապված հայկական հետախուզության, և առաջին հերթին այն ուղղորդող ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր Շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի դերակատարման հետ Հայաստանի

Հանրապետության համար չափազանց կարևոր այդ իրողություններում, ինչն ամենևին էլ սուվեր չի գրում նշանավոր գորավար Գարեգին Նժդեհի ռազմա-քաղաքական գործունեության վրա. - ՎՎ

15. Հայ հետախույզ Տիգրան Դեղյանցի կյանքի և արգասաբեր հետախույզական գործունեության մասին ավելի մանրամասն տես՝ ՎՎ Կրաքյան, Հայկական հետախույզությունը Առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Երևան, «Ասողիկ» հրատ, 2003, էջ 5-6, 45 և այլն, Տես նույնի Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Երևան, «Լուսակն» հրատ, 2006, էջ 22, 45, 53-57, 68, 78-83 և այլն, Տես նույնի Էջեր Տիգրան Դեղյանցի հետախույզական գործունեությունից, Հայկական բանակ, 2007, N 1 (51), էջ 82-88, Տես նույնի Մեկ էջ Հայաստանի Հանրապետության հետախույզական ծառայության պատմությունից. Տիգրան Դեղյանց (1918-1920 թթ.) . «Կանթեղ» 3, Գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 3, Երևան, «Ասողիկ» հրատ., 2006, 157-164 և այլն:

16. Դեղյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բնստոն), 1944, N 6 (245), նոյ.- դեկտ., էջ 75:

17. ՀԱԱ, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 184, ք. 3-4:

18. Դեղյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բնստոն), 1945, N 4 (249), յուլիս-օգոստոս, էջ 83:

19. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 204, ց. 1, գ. 132, ք. 62:

20. Դեղյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բնստոն), 1945, N 1 (246), էջ 85:

21. Տես Hovannissian R.G. The Republic of Armenia. From Versailles to London, Vol. II, 1919-1920. Berkeley, Los Angeles, London, 1982, pp. 68, 177-178, 489:

22. Տես «Ուրբաթ», 1990 թ. մայիսի 25:

23. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 155, ք. 24:

24. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 201, ց. 1, գ. 489, ք. 62, Ֆ.Պ- 278, ց. 1, գ. 11, ք. 16:

25. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 100, ք. 62 (այդ ներկայացուցությունը, իր կազմում ունենալով ընդամենը 8 - 10 աշխատակից, 1919 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ խորհրդարանի որոշմամբ կազմաքայլեց, և Թիֆլիսում ՀՀ զինվորական գործերի վարույթը դրվեց գեներալ Հ. Ա. Քիչմիշյանի վրա):

26. Տես Նույն տեղում:

27. Տես Նույն տեղում, գ. 27, թթ. 142-143:

28. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 201, ց. 1, գ. 489, ք. 62, Ֆ.Պ - 278, ց. 1, գ. 11, ք. 16:

29. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 155, ք. 32:

30. Տես ՀԱԱ, Ֆ.Պ- 204, ց. 1, գ. 104, ք. 61:

РЕЗЮМЕ

Создание и деятельность разведывательной службы Республики Армения 1918 - 1920 гг. Ваник Вирабян

В статье исследуются формирование и направление деятельности Разведывательной службы Главного штаба Министерства Обороны РА в 1918-1920 гг. Показывается конкретная практическая работа армянских разведывательной и контрразведывательной служб в деле разоблачения и приостановления вражеских происков на территории Армении, а также рассматриваются попытки организации разведывательных групп в соседних государствах - Азербайджане, Грузии и, в частности, Турции, где в конце 1919 - в начале 1920 гг. действовала группа капитана Т.Девоянца. Показано упорство разведывательной и контрразведывательной служб РА в деле противостояния более опытным и сильным службам противника, получения необходимой и нужной информации. Предприняты шаги по обеспечению решения вопросов государственной безопасности РА. Аргументированно обосновано, что, являясь составной частью государственной системы безопасности РА, Разведывательное и контрразведывательное отделения Главного штаба МО РА предприняли немало усилий в разрешении различных вопросов, касающихся национальной безопасности страны (так называемое дело представителя Азербайджана в Ереване Хана-Текинского и т.п.), восстановления правопорядка в различных частях Республики Армения путем подавления мятежных стремлений магометанского населения (Беюк-Веди, Зангибасар, Карская область и т.п.).

SUMMARY

The Formation and Activity of the Intelligence Service of the Republic of Armenia in 1918-1920 Vanik Virabyan

The article investigates the formation and activity direction of the Intelligence Service of the RA Defense Ministry General Headquarters in 1918-1920. It shows concrete practical activity of the Armenian intelligence and counterintelligence services in disclosing and suspending of hostile schemes on Armenian territories. It also considers the attempts of formation of intelligence groups in neighbouring countries -- Azerbaijan, Georgia, and particularly in Turkey, where from the end of 1919 and

beginning of 1920 group of captain T.Devoyants was operating. The article shows persistence of the RA intelligence and counterintelligence services in confrontation to enemy's more experienced and strong forces, and in obtaining necessary information. Many steps to settle the RA state security issues were undertaken. Facts prove, that being a constituent part of the RA state security system the Intelligence Service of the RA Defense Ministry General Headquarters undertook efforts to settle some issues in National Security sphere (the so-called case of Azerbaijani representative Khan-Tekinskiy in Yerevan), to restore law and order in some parts of the Republic of Armenia through the suppression of rebellious aspirations of Mahometan population (Beyuk-Vedi, Zangibasar, Kars District, etc.).